14/11/2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃՇՏՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ /ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ 1404935/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի կողմից հայտարարված հրապարակային աճուրդ-վաճառքը տեղի կունենա Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 62 հասցեում գտնվող Արտաշատի համայնքապետարանում՝ 2023 թվականի դեկտեմբերի 18-ին ժամը 11-ին: Աճուրդի կդրվի Արտաշատ համայնքի սեփականությունը հանդիսացող հետևյալ անշարժ գույքերը՝

- Արտաշատ համայնքի Մխչյան գյուղի, 8-րդ փողոց 16 հողամաս հասցեում գտնվող 03-059-0087-0004 կադաստրային ծածկագրով 0,1096հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանվել է 3 164 700 /երեք միլիոն հարյուր վաթսունչորս հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ:
- Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի, Ծովակալ Իսակովի փողոց 107/6 հասցեում գտնվող 03-001-0072-0487 կադաստրային ծածկագրով 0,00125հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս: Մեկնարկային գին սահմանվել է 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
- Արտաշատ համայնքի Քաղցրաշեն գյուղի, Նարեկացու փողոց 28 հասցեում գտնվող՝ 03-097-0197-0004 կադաստրային ծածկագրով 0,10605հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գին սահմանվել է 1294871 /մեկ միլիոն երկու հարյուր իննսունչորս հազար ութ հարյուր յոթանասունմեկ/ ՀՀ դրամ:
- Արտաշատ համայնքի Քաղցրաշեն գյուղի, Հայրիկ Մուրադյան փողոց 11 հասցեում գտնվող՝ 03-097-0196-0018 կադաստրային ծածկագրով 0,08003հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գին սահմանվել է 977166 /ինը հարյուր յոթանասունյոթ հազար հարյուր վաթսունվեց/ ՀՀ դրամ:
- Արտաշատ համայնքի Քաղցրաշեն գյուղի, Խ. Աբովյան փողոց 61 հասցեում գտնվող՝ 03-097-0004-0043 կադաստրային ծածկագրով 0,0785հա մակերեսով

բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս: Մեկնարկային գին սահմանվել է 1060000 /մեկ միլիոն վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդի նախավճարի չափ է սահմանվում մեկնարկային գնի 50%-ի չափով: Վճարման հաշվարկային հաշվեհամարն է՝ 900415151068: Աճուրդի դրված հողամասի քայլի չափը հաշվարկված է մեկնարկային գնի 5 % չափով: Աճուրդի հայտի, մասնակցության վճարի անդորագրի, պահանջվող մյուս փաստաթղթերի ընդունումը կդադարեցվի աճուրդի նշանակման օրից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 12-ը ներառյալ:

Տվյալ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, հողամասի օգտագործումը չի առաջացնում սերվիտուտ:

Առաջացած հարցերի և տեղեկությունների համար դիմել Արտաշատի համայնքապետարան աճուրդային հանձնաժողովին /կազմակերպչին/: Հեռախոս՝ 091191151

Աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերն են՝ անձը հաստատող փաստաթուղթը և նախավճարի անդորրագիրը:

Աճուրդավար՝ Համայնքի գլխավոր ճարտարապետ Վարդան Այվազյան

Արձանագրող՝ Համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Արամայիս Բաղալյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՄԿՐՏՉՅԱՆ